Պատկի միւս թեւին, նայողի աջ կողմից, վերջին մեդալիոն պատկի տակ, նկատւում է մի սիրամարգ, պոչը վեր բարձրացրած, բայց առանց փռելու, իսկ բուն թեւի վրայ ձախ ոտով ծունկ է չոքել մօրուքով եւ գլխի գանգուր մազերով մի մարդ, նիզակն ուղղած յարձակուող առիւծի վրայ:

Այս լուսամուտից դէպի ձախ արեւմուտք, տեսնում ենք մի արմաւենի, տակը առիւծ կանգնած, գունչը փոքր ինչ կորած, պոչը կախ երկու ոտների մէջ: Սրանից դէպի արեւմուտք քանդակի մի մնացորդ որկը, ողկոյզի եւ տերեւի փոխէփոխ շարքով, գնդաձեւերից կազմուած զարդը բոլորակների մէջ, բոլորը յատուկ են մեր հնագոյն բազիլիկաներին, ինչպէս Քասախն (Պատկեր 7, 8) է կամ Աւինայի բազիլիկաները (Պատկեր 20) իրենց դռների ճակատաքարերի քանդակներով, Ե.–Զ. դարի գործեր: Քասախի ամբողջ շէնքի պայտաձեւ կամարները, անաղարտ մնացած է հարաւային նաւը, հարաւային եւ մանաւանդ արեւմտեան դրան ճակատաքարերի քանդակը, խաչի պորտին եւ թեւերին գնդակները, խա-



Պատկ. 8

թատունկ, տերեւով եւ աւելի բարձր, հարաւային պատի ճակատի լուսամուտի մնացորդն է, խաղողի եւ տերեւի փոխէփոխ շարքով, որից դէպի արեւելք հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Ես Յովա եւ ծառայ այ եւ սուրբ խաչին», դարձեալ միջին երկաթագրով, բայց ոչ նախընթացի ժամանակակից: Պատկերաքանդակներով զարդարուն լուսամուտից դէպի արեւելք կայ դարձեալ մի լուսամուտ, պսակը ելնդաւոր կիսագնդակներից բաղկացած: Արմաւենին, որթատունչի երկու կողմից եղջերուները եւ մանաւանդ արմաւենի ծառերը, յայտարարն են նորա միջագետական աղերսի եւ ոչ ուշ քան Ե. դարը: Քասախի եւ նման խոյակների գոյութիւնը, որպէս միջագետական հոսանքի ազդեցութիւն, հաստատում է Ստրզիգովսկին, համարելով Դ.–Ե. դարերի գործ:*

*Die Koptishe Kunst. էր. 65, պատկ. 85: 7334: